ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

# ԲԱՐԲԱՌ ՄԱՅՐԵՆԻ

Քանի աշխարհում կայ Արարատ Սար,
Ճակատին՝ Հայոց փառքն արեւատառ,
Ոչ մի ահեղ ձեռք քեզ չի սասանի,
Մեր սրտից կերտուած բարբառ Մայրենի:

Քանի կայ հողը մեր հայրենական,
Կան ծաղկունքը վառ, ժպիտը մանկան,
Պիտի յորդանաս նման ովկիանի,
Բիւրեղեայ քերթուած՝ բարբառ Մայրենի:

Քանի Արաքսը կ'երթայ դէպի ծով,
Մերթ ծիծաղելով, մերթ լուռ թախծելով,
Պիտի բարկ պահես յոյսն Հայաստանի,
Մեր արեամբ զօդուած բարբառ Մայրենի:

Քանի աստղերի թարթիչների տակ,
Կը ծփայ վանայ ծովը կապուտակ,
Պիտի ղօղանջես ջերմ ու կենդանի,
Զօրացած, զտուած բարբառ Մայրենի:

Քանի մեր երգը հնչում է հզօր,
Եւ հայ մայրերը երգում են օրօր,
Քո ամենազօր լոյսը չի հատնի,
Մեր հոգում ջահուած բարբառ Մայրենի:

Քանի՝ Դաւթի պէս կայծակը ձեռքին՝
Պաշտպան ենք կանգնել Հայոց լեռներին,
Դուն երբեք, երբեք, երբեք չես մեռնի,
Յաւերժ հաստատուած բարբառ Մայրենի:

ՍԱՐՄԷՆ

digitised by A.R.A.R.@